

տարուելով՝ ի 1829 ի մուտք յունվարի, առաջին օրն նոր տարոյ՝ նոր առաջնորդն Սիմեոն վարդապետի հետ ուղեկցելով՝ ժամանեց յիշ-քիլիսէ:

(Ըարութակելի)

Պ. Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԵԾԸ ԴՊՐՈՑՈՒՄ \*)

(Եաբունակունեան և Աբը):

Մենք գանք վճռական պատասխանի. Պէտք է ծեծը, թէ չէ: Այս հարցմունքը շատ անգամ ենք լսել, և միշտ շփոթուել ենք պատասխանելու: Ի՞նչ կասէր բժիշկը, եթէ մի անձանօթ հիւանդ մօտենար և նորան թմրեցնէր այս հարցմունքով. Արդեօք խմբմ

(\*) Կարևոր ենք համարում այս տեղ նշանակել առաւել այն վրիպակները, որոնց պատճառով որ անցեալ տեարակում մարի շփոթութիւններ են առաջ եկել.

Եր. տող. պետ	կարեւոր ենք համարում այս տեղ նշանակել առաւել այն վրիպակները, որոնց պատճառով որ անցեալ տեարակում մարի շփոթութիւններ են առաջ եկել.	154 3 ուսուցիչ	158 26 կար' կինը.
155 13 (աւելացնել)	պատճառ- թիւնից իսկ յայտնի է, թէ ազգերը ծայրայեղ մո- լութիւններից յետոյ ծայ- րայեղ սուտ ճգնաւորու- թիւն են սկսել:	159 18 Herr B...	159 18 Herr B...
• 14 (Նոր տող) Բայց		160 17 ուր	160 17 ուր
157 7 նոցանից		• 20 բանը չը հասնի	• 20 բանը չը հասնի
• 30 արդիւնք		• 24 եր	• 24 եր
158 21 պիտի պատճառէ		161 8 Այսպէս	161 8 Այսպէս
• 25 ուր աւելի		• 24 (Նամակագրողի իսուրերը չակերտների մէջ նշանա- կել. նշնպէս և միւս կը- տորներում):	• 24 (Նամակագրողի իսուրերը չակերտների մէջ նշանա- կել. նշնպէս և միւս կը- տորներում):
163 28 կերպով միշտ կըկոչուի		163 28 կերպով միշտ կըկոչուի	

այս գեղը . . . : Խոկ եթէ մեզ հարցնեն, թէ արդեօք լինում  
են այնպիսի դեպքեր, ուր որ ծեծը կամ ծեծի երկիւղը մար-  
գուն խոհեմացնում է, —առանց վարանելու կը պատասխա-  
նենք. այս, լինում են: Զոր օր. եթէ միամուաբար անցնելիս,  
յանկարծ տեսնում ես, որ աշակերտներից մէկը իւր ահագին  
փթանց բուռնցքները գազանաբար տալիս է մէ նոյն և ան-  
դաշտան արարածին, և եթէ սկսես կոպէկանոց խրատներ կար-  
դալ նորա գլխին, հասկացնել նորա արարքի չարութիւնը կամ  
ամաչեցնել նորան, —դու կորստեան կը մատնես թէ զոհին և  
թէ գիշատիչ գազանին: Քո քարոզից յետոյ ևս անշուշտ մի և  
նոյն պատմութիւնը կըկրկնուի: Որպէս զի վերջ տրուի վայրե-  
նաւթեան, այդ ըստէին պէտք է զսպել գազանութիւնը և միայն  
գազանութիւնը, որովհետեւ այն բարբարոսի մէջ ամենայն խիզճ  
և բանտկանութիւնը խեղդուել է գաղտնութիւնից, այդ հո-  
գու մէջ համոզմանց համար տեղ չի մնացել: —Կամ եթէ դա-  
սարանի քառասուն աշակերտները սիրուն լարուած՝ միատեղ  
գծեր են գծում քո նշանացի հրամանով և բախմամբ —իբրև մի  
մարդ, և եթէ յանկարծ նոցանից մէկը սկսէ ճանճի հետ խա-  
ղալ, իմացիր, որ եթէ դու յապաղես և խոյն մատով կամ քա-  
նոնով չըսպառնաս, քո դասարանը կըխառնուի, և դու կը նմա-  
նիս այն գօրապետին, որի հրամանները՝ դասալիք և անկարգ  
զօրքի աղմկութեան մէջ՝ յօդս են ցնդում:

Խոկապէս խնդիրը ուրիշ ձեռվ պիտի առաջարկուի. արդեօք  
դպրոցում պէտք է հեղինակութիւն ճանաչուի, թէ նորա մէջ  
անիշխանութիւն տիրէ: Տարակոյս չըկայ, թէ պատասխանը  
ի՞նչ պէտք է լինի: Խոկ ուր որ հեղինակութիւն կայ, այն տեղ  
գործում է ոյժ, ահ և պատկառանք, ցաւ և խրատ. այդպէս  
է պետութիւնը, այդպէս է ընտանիքը, այդպէս պէտք է լինի  
և դպրոցը:

Սակայն հեղինակութիւնը կորցնում է խոր բոլոր նշանակու-  
թիւնը և խորհուրդը, եթէ գործում է ոչ թէ յօդուտ հասարա-  
կաց է, այլ յօդուտ այն անձի՝ որի ձեռքումն որ կայ հեղինակու-  
թիւնը. նա ուրիշ միայն միջոց պիտի լինի, և ոչ թէ նպատակ:  
Այս խոպերը այն են նշանակում, թէ երբէք ներելի չէ ուժի,

ահի, ցաւի անորեղի գործադրութիւնը։ Գթութիւն, մարդասիրութիւն, համբերութիւն, արթնութիւն, զգաստութիւն՝ սոքա են հեղինակութիւն ունեցողի խսկական փառքը։ բայց և նորա թուլութիւնը՝ նորա անփառութիւնն է։

Հեղինակութեան դէմ հնազանդութիւն է ենթադրվում։ Բայց կայ սորբական հնազանդութիւն և կայ բարոյական հնազանդութիւն։ առաջին դէպքում ազատութիւն է կորցնում «Պարդը, երկրորդ դէպքում» մայն նորա մոլի, անառակ, անհամբոյր և անընտել կրքերն են զսպվում։ մէկով ընկերհաշտութիւնը կործանվում է, միւսով հաստատութիւն է սուանում։ Հեղինակութեան ամենագժուար՝ բայց և ամենապահճակ գործքը հէնց այն է, որ կարողանայ զգուշութեամբ խուսափել իւր երկսայրի գործիքի վնասներից, և ընդհակառակ՝ գործիք դաւնայ բարոյական շինութեան։ Բայց ինչպէս էլ որ նկարագրենք հնազանդութիւնը, վերջի վերջոյ նորա անունն է՝ կորուստ ազատութեան, կորուստ դրախտի։ Ազատութիւնը բնութեան այնպիսի առանձնաշնորհութիւն է, որ նորա արժէքը և գինը լաւ է ճանաչում ամենայն էակ, ամենայն վայրենի և քաղաքակիրթ մարդ, նոյն իսկ մանուկը կամտւ չի ուզենայ զրկութիւ այդ բարիքից։ Արդ Բնչպէս ընկճենք փոքր աշակերտի յամառութիւնը, ըմբռստութիւնը, պղերգութիւնը։ Բնչպէս գրաւենք նորան դէպի յաջողութիւն, երբ նա միշտ դէպի ձախորդութիւն է հակվում։

Հայ ուսուցիւր մի պատասխան ունի դորա համար, — ծեծելով և գարձեալ ծեծելով։ Հազարից մի օրինակ բերենք. Երբ որ նապոլէոնի զօրքը ցրտից, սովից և յոգնութիւնից չէր կարողանում քայլել և ուշանում էր Ալպեան սարերի վերայ բարձրանալ, յուսահատ զօրապետները եկան կայսրից հրաման ստանալու, որ առաջապահ զինուորներին հրացանով գնտակեն ի խրատ միւսների։ Կայսրը խթանեց երիվարին, անցաւ զօրքի առաջը, իջաւ երիվարից, թմբուկը առաւ զինուորի ձեռքից և սկսեց թմբկահարել. այս տարօրինակ երեսոյթը այնպէս քաջալերեց բանակին, որ նա նոր եռանդ զգալով անյապաղ բարձրացաւ սարի կատարը, առանց խանգարելու զինուորական կար-

գը: Հետեւապէս թէ շատերի կետնքը ազատուեցաւ մահապարտութիւնից, և թէ որ աւելի մեծագոյնն է՝ մարդիկ հնաղանդուեցան յօժարսովեամբ: Օրինակը այս է ուսուցանում, թէ ցրտի, սովի, յօգնութեան դէմ՝ ծեծը անօգուտ է: Զօրաւոր բան է ծեծը, բայց ոչ ամենազօր: Նատերը կարծում են, թէ մարտիրոսական չարչարանքները, ինչպէս որ որբոց վարքի մէջ նկարագրուած են, առասպելութիւն է: զուր է այդ թերահաւատութիւնը: Անգղիայի չարաճճիները այժմ խօսք են կապել յուսահատեցնել իրանց բռնակալ ուսուցիչներին: Նորա վճռել են անորտուանջ դիմանալ ծեծին: և աշա երբ որ նոցա գանահարում են, նոցա կաշին կապտեցնում, պլոկում և արիւնթաթախ են անում, նոքա պատուով կատարում են իրանց խօսքը՝ ոչ լացի ձայն են հանում և ոչ արտասուզ թափում: Որքան որ պիունք, թէ պատիժը անհրաժեշտ է, սակայն վա՛յ պէտք է տանք այն պատժին, երբ որ նա աննպատակ է անցնում:

Բայց մենք տեսնում ենք, որ ինքը բնութիւնը պատիժներ է տալիս նա շատ անգամ մրգ խրատում և խոչեմացնում է պատժով. ով որ մատը կրակի մէջ խոթէ՝ նա կըդաղուի, ով որ խթանի դէմ աքացէ՝ նա կըխոցուի, ով որ բորիկ ոտքով դուրս գնայ՝ նա կը մրսի, ով որ ուշանայ՝ նա կը զրկուի, ով որ մէկ ասլտակ տայ՝ նա կըստանայ տասը, ով որ Մասիսը ուղենայ շալակել՝ նա ծաղրելի կըդառնայ, և այլն: Հայ ուսուցիչը ժըպտալով բացականցում է. միթէ այս բոլորը այն չի՞ նշանակում, թէ ով որ անհնազանդ լինի՝ նորան ծեծիր: Ի հարկէ, ոչ: Մենք չըպէտք է մոռանանք և այն, որ բնութիւնը տարբերութիւններ է դրել մանուկների մէջ: Կայ մանուկ՝ որ մի անգամով խրատվում է կրակից, և կայ մանուկ՝ որ տաս անգամով էլ չի խրատվում. թէպէտ երկուան էլ զգում են ցաւ, բայց այդ մի և նոյն ցաւի աղղեցութեան յեշու-Ռիւնը՝ շատ տարբեր է դոցա մէջ: Կամ միթէ ծաղրը ամենի համար աղղու պատիժ է. մէկին կուզես տաս անգամ ծաղրիր, նա ուշք չի գարձնի քո ծաղրի վերայ: Մենք տեսնում ենք, որ ամենայն ցաւ ու պատիժ հաւասար զօրութեամբ կամք չի զարթեցնում՝ որպէս զի

մարդ սկսէ այնուհետև խորշել նորանից, մարտիրոսը շատ անգամ տանջանք յանձն կառնէ, բայց ոչ մի անգամ կամք չի ունենալ հաւատոքից ուրանալու։ Ուրեմն ցաւով աղբելս՝ համար մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, թէ նա ինչպէս է տպաւորվում յիշողութեան մէջ և ինչպիսի կամք է շարժում։ Պատժի գաղափարը միայն այս հանգամանքով չի վերջանում. որովհետև ցաւը շատ թանկ կորուստ է մոտաւոր պյտերի յաջողութեանց համար, միշտ պէտք է ի հաշիւ առնել, թէ արդեօք կարելի չէ։ Մտադրուած նպատակին հասնելու համար՝ փոխանակ սաստկագոյն ցաւի՝ աւելի մեղմ ցաւ գործ դնել, կամ թէ բոլորովին հրաժարուիլ ցաւի գործածութիւնից։ Եւ ահա պատժի ամբողջ պէսունիւնը այս է։

Եթէ բնութիւնից կամենումենք խրատ առնել, մենք պէտք է ուսանենք ոչ թէ նորա կէսը, այլ ըստ ամենայն մասանց։ Միթէ բնութիւնը միայն տանջում է. ոչ ապաքէն նորա բոլոր խրատները հէնց նորա համար են, որ վերջի վերջոյ մենք աւելի լիութեամք վայելենք Աստուծոյ անսահման բարիքները, աւելի երջանիկ և բախտաւոր՝ լինինք։ Խսկ Բ'նչ է գպրոցը մանկան համար, մանաւանդ սկզբներում։ դա իւր ամբողջութեամք միայն տանջանք է և տանջանքների ամենամեծը։ Մենք փշաքաղվում և քստմնում ենք, երբ որ կարդում ենք Սիղիփոսի, Տանտալի, Դամոկլեան սրի և ուրիշ վիպական տանջանքները։ Բայց այս տանջանքներից որ մէկը չեն կրում մեր խեղճ աշակերտները իրականութեան մէջ. այն զուարժ աշխարհքից կորած՝ իբրև թարամող ծաղիկներ՝ նորա սղմուել են չորս պատերի մէջ, ուր լոյսը քիչ՝ օգը ապականուած է, ուր անշարժ պիտի նստեն մի զանգից մինչեւ միւսը և այդպէս զբաղուին ամենատանհետաքրքիր բաներով՝ անմիտ գծեր գրելով, ու ու մանր տառեր քաղելով։ Այսուեղ արգելուած է հանաք, զրոյց, խալ. պահանջվում է գոխային լուսութիւն. և միօրինակ օր աւուր տեսումէ այսպէս մէկ, երկու, երեք, մինչեւ հինգ ժամ։ Նորա յատուկ աշխարհքը այստեղ բոլորովին փոխուած է. ոչ մի աւարկայ չըկայ՝ որ գրաւէ նորա ոքեւ զգացումները—սէրը, մտերմաւթիւնը, առասպելաստեղծութիւնը, գեղասիրական ձգտումը, նոյն խսկ

անձնասիրական գգացումները՝ եսասիրութիւն, իշխանասիրութիւն, գոռողութիւն, չարտասիրական քաղցրութիւն—մնունդ չեն ստանում այս նոր տեսակի գժողովի մէջ, իսկ ընդհակառակ նորանից պահանջվում են առելի նոյն և անհետագրելու զգացումներ՝ այսինքն ուսումնասիրութիւն, ճշմարտասիրութիւն, առափենութիւն, խոհեմութիւն, ապագայ չարեաց գուշակութիւն. մի խօսքով պահանջվում են ոչ մանկական բաներ, Ուսումնարանից յետոյ՝ տունն էլ տուն չէ, այն տեղ էլ սերուելու բան շտա կայ, նա էլ միենոյն գպրոց է, բայց այլակերպուած: Մենք պէտք է լաւ մոռաքերենք այս ողբալի հոգեկան զինակը, մանկանց այս մեծամեծ տանջանաց դրութիւնը, և այնպէս հասկանանք մեր մահացու մեղքը, թէ ինչ է նշանակում այսքան չարչարանաց վերայ բարդել և մի նորը, այսինքն ծեծը:

Դահնական ոգին այնպէս պինդ է նստել հայ ուսուցչի սրտի մէջ, որ մենք զարմանում ենք, թէ որքան կոյր է նա, որ չի կարողանում տեսնել կեանքի՝ ուրեմն և դպրոցական կեանքի բոլոր տանջանքները: Մենք ի զուր կարծում ենք, թէ միմիայն ծեծն է այն շարժառիթը, որով գործում է մանուկը և այդպէս փոխում է իւր վարքը դաստիարակչի կամեցածի համեմատ: Որքան զգացմունք կայ մարդու մէջ, այնքան արտիստին և պանջան+ կայ նորա համար պատրաստուած, որոնք ամէնքը նորանոր շարժառիթներ են գործելու համար. իսկ թէ դոցանից որը առելի սաստիկ և զօրեղ է, դա կախուած է մարդու խառնուածքից, բնութիւնից և կրթութիւնից: Արդ եթէ ուսուցիչը կամենում է ոչ թէ գահին մնալ, այլ արդարեւ դաստիարակիչ լինել,—նա պէտք է սովորէ միշտ յարմար շարժառիթ ընտրելու՝ նայելով թէ դէպքը և մանկան խառնուածքը ինչ է պահանջում, իսկ այդ շարժառիթների մէջ աւելի գերազանել— արտիստական շարժառիթները:—Մենք մի համառօտ հայեացք ճգենք այդ շարժառիթների վերայ, և տեսնենք, թէ ինչ ահագին պաշար կայ ընտրութեան համար, թէ նոցանից որը աւելի զգուշալի է և որը աւելի նախապատուութեամբ պիտի գործ գըրուի, քան ինչպէս որ մեր սովորութիւնն է դառել:

Զգացմանց մէջ առաջին տեղն է բռնում հաշնէ իաղմանէան

զգայութիւնները այսինքն նորա գործարանների առաջական և հետանդական վիճակները. մենք զգում ենք լաւ մարսողութիւնը, անարդել արիւնագարձութիւնը, շնչառութիւնը, մկանց և նեարդերի առողջութիւնը, կամ դոցա հակառակը: Այս հիմնական զգայութիւնները հին ժամանակներից համարուել են ամենահաստատում նեցուկ՝ մարդկանց վերայ աղդեցութիւն գործելու համար, նոցա կամքը ընկճելու համար. նոյն իսկ բոլոր մարմնական պատիժները, ինչպէս անունն էլ ցոյց է տալիս, մարմնի կազմութեան զգայութիւններ են. բանտարկելութեան տաղուկութիւնը, բոնի աշխատութեան յոգնածութիւնը, ծընկաչորութիւնը, սովատանծութիւնը, ծարաւը, գանահարութիւնը—բոլորը այս կարգիցն են: Բայց ի հարկէ սոքա ամենից աւելի բարբարոսական պատիժներ են ուրիշի կամքը ընկճելու համար, որովհետեւ սոքա քայքայում են մարդու առողջութիւնը, որի հետզհետէ պակասութիւնը՝ մահուան մերձենալ է նշանակում: Աւելի կարեոր է նկատել այն, թէ այս մասում ստացած զուարձութիւնները ամենամեծ նշանակութիւն ունին կենաց համար. զոր օր. մկանց և նեարդերի ծայրայել ձըդուման վիճակները՝ այսինքն թէ նոցա անգործութիւնը և թէ նոցա չափաղանց աշխատութիւնը՝ հաւասարապէս տանջանք է, իսկ նոցա լահանոր գործողութիւնը՝ մարդու ամենամեծ բախտաւորութիւն և զուարձութիւն է:

Եւտոյ մարդուս կեանքը մաշվում և զուարժանում է իւր հինգ գեայաբաններէ միջնորդութեամբ: Աչքը, ականջը և միւս զգայարանքները՝ ոչ միայն բարձր ուրախութիւններ են տալիս մեզ, այլ և ցաւեր: Միայն փառք տանք Աստուծուն, որ մարդիկ չեն տանջում գարշելի հոտերով, դառն համերով, անտանելի ձայներով, արեգակի ճառագայթներով, և ուրիշ զգայարանական ցաւերով: Նոքա միայն շօշափական զգայարանքն են ընտրել պատժի համար (դանահարութիւն), բայց մենք տեսանք, թէ միայն այդքանն էլ ինչ վստանգ է սպառնում: Իսկ այս կարգի զուարձութիւնները շատ բազմակերպ և օգտաւէտ եղանակով կարելի է գործ գնել՝ իբրև հրապոյր վարքը դէպի լաւ կողմը գարձնելու համար:

Ապա գալիս են անթիւ յայդէց կամ ուրիշ շարժութէր, Այս կարգը՝ որ բռն ներքին զգացմանց ընդարձակ շրջանն է կազմում, շատ տարբեր խմբեր է ամփոփում իւր մէջ, Առաջինն են ընդհանուր կամ հայտնառներն զգացումները. աշակերտը իւր ընկերների մէջ ստանում է կամ նոցա վտահութիւնը կամ նոցա վհատութիւնը, ինքը կամ առաջնորդ է դառնում և իւր կողմն է հրապուրում միւսներին, կամ թէ չէ՝ որպէս մի անշան կաթի՝ ընդհանուր հեղեղի յորձանքի մէջ է ընկնում, Ինչ որ ամենքը գովելի և պարսաւելի են համարում, այն ակամայ գնահատում է մի և նոյն կերպով իւրաքանչիւր անհատը և ո. ընկերութեան սէր վայելելն մեծ բաղդ է, այդ վայելքից զբրկուիլը՝ մեծ թշուառութիւն է.

Երկրորդ՝ հայնէներական զբայցանթէր, այսինքն ուժի գիտակցութիւն, բարկութիւն, չարակամութիւն, գերազանցութեան ծարաւ։ Ամենից խոր արմատացած և ամենից վտանգուոր զգացումը սա է։ Խստասրտութիւնը այս տեղից է բղխում։ Հանաքի, խաղի մէջ թէպէտ միամնութիւն կայ, սակայն առակը զգուշացնումէ մեզ, թէ հանաքը՝ լսնաւ կարող է դառնալ. մրցման մէջ էլ այդ տարրն է խառնուած (նախապատուութիւն ստանալ, ուրիշին նուաստացնել). նոյն խոկ արդարասիրութիւնը չարախնդութեան բաժին ունի իւր մէջ, որովհետեւ մինչեւ որ չարագործութիւնը հատուցում չի ստանում՝ մեր հոգին տրտում է։ Ուրեմն այս մի զգացման մէջ միաւորուել են բարութիւնն ու չարութիւնը, նա միանգամայն գժոկիքի և դրախտի ծնունդ է։ Այսքան տարբեր տարերքների խառնուրդը մի զգացման մէջ, յայտնի է, թէ ինչ ճարտարութիւն կը պահանջէ ուսուցչից, որ նա կարողանայ խելացի կերպով կառավարել ոգուոյ այդ տեսակ յուղումը. նա ոչ միայն պէտք է աշակերտներին զգաստ և զսպուած պահէ, այլ և իւր անձը, որպէս զի հարկաւոր դէպքում թէ ստատել կարողանայ և թէ քնաւ չը կարցնէ իւր խոհեմ սառնասրտութիւնը,

Իշխանականիքունիւնը, էսվոդի և պարօատէ զբայցանց՝ շատ մօտիկ են նախընթաց խմբի զգացման։ Գոհացնել անձնապատութիւնը, պարծանքը, գովասանասիրութիւնը՝ այդ նշանակում

Է մեծ բերկրութիւն պատճառել, իսկ խոյել և հակառակել նոցա՝ նշանակում է համապատասխան հարուած տալ, Միթէ հարկաւո՞ր է աւելացնել, թէ կայ դէպք՝ ուր որ մէկն է հարկաւոր անել, և կայ դէպք՝ ուր որ միւսը:

Ապա յիշենք նրաւոր վետինաց մեծ հանդէսը, որ անսպառ աղրիւր է նոր տեսակ ուրախութեանց և տրտմութեանց, Եթէ ուսուցիչը կշեռքի մէջ նուրբ կերպով չի կշռում աւանդելի գիտութեան քաղցրութիւնը և մտաւոր զուր ջանիքերի տարտամութեան դառնութիւնը, նա հարկաւ իւր միսիթարութիւնը կաշխատէ գտնել միշտ միայն քանոնի մէջ։ Նա պէտք է քաջ հասկանայ, թէ մտաւոր գործունէութիւնը ե՞րբ և ի՞նչպիսի պայմաններումը կարող է հրապուրել և քաջալերել։ Ամենայն գիտութիւն միակերպ չէ։ կայ որ ինքնին գրաւիչ է, կայ որ ցուրտ և ցամաք է։ Ափսոս որ հէնց վերջին տեսակը աւելի կարևոր է մարդուն։ Բնդհանրացած գիտութիւնը ամենից դժուարն է։ ուսուի մանուկը չի սիրում վերացեալը, նորան զբաղեցնում է աւելի թանձրացեալը։ Մենք պէտք է ամենայն ջանք գործ գընենք, որ յաղթենք այդ հակակրութիւնը։ Զոր օր. տարբեր իրերի մէջ մի նմանութեան կամ առընչութեան գիւտը՝ մանկան համար մեծ ուրախութիւն է, որովհետեւ այդ դէպքում նորա մտքից կարծես մի ծանր բեռն է ընկնում և նա իրան թեթեացած է զգում։ Նա ունի վերջապէս մանկական հետաքրքրութեան և ինքնագործութեան ձգուում։ Թէպէտ սոքա կեղծ բաներ են, բայց պէտք է միշտ օգուտ քաղել յարմար բոպէից, երբ որ մանուկները իրանց անձը այդպիսի վիճակի մէջ եղած են կարծում։

Անմիջապէս յիշեցինք ինժնադաշնանուեան զգացումն։ Սնունդը պատրաստում է նեարդային հօռանք կամ կենսական եռանդ, որը որ ինքնին շարժում է մեր զանազան գործարանները. ուրեմն գործունէութիւնը մեր մէջ ինքնարեր է։ Արդ եթէ այս գործունէութիւնը անարգել ընթանայ՝ այնու զուարթանում է մարդը, իսկ եթէ խափանուի՝ մարդու հոգին ընկճլում է։ Ակայն այդպիսի գործունէութիւնը սկզբնապէս կոյր է, նա կարող է օգտաւէտ կերպով ընթանալ, կամ աննպատակ կոր-

չել, մինչև որ խսպառ պարպուի: Ուսուցչի հմտութիւնը այն պիտի լինի, որ ոյժերի համեմատ յարմար նպատակ ծրոգրէ և ըստ այնմ ուղղէ այսպէս աննպատակ սպառուող զուարթարար գործունեութիւնը: Բայց չը պէտք է մոլորուիլ ինձագոյն ծովածունեան անունով քարոզած ցնորդներով: աշակերտը աշակերտ է, նա միշտ կարօտ է օդութեան, նա պէտք է առաջնորդուի իւրեանից աւելի գիտցողից՝ այսինքն ուսուցչից:

Գեղասիրական արուեստները վսեմացնում՝ գժուար տշիւառութեանց միջոցին քաջալերում են մեզ և նորոգում են մեր ոյժերը: այս մաքով նոցա մէջ առաջին տեղն է բռնում բանաստեղծութիւնը:

Աերջապէս գալով բարօյական զգացման, մենք ի հարկէ լենք դանդաղի ուսուցանել աշակերտներին այն պատուէրը, թէ «Այնպէս վարուեցէք ուրիշների հետ: ինչպէս որ դուք կուղւայի՛ որ մարդիկ ձեզ հետ վարուին»: բայց մանկան իրիզնը ըմբռնում է աւելի ստորնադպյան կանոն, որ ասում է: «Ուրիշի հետ այնպէս վարուիր, ինչպէս որ նո քեզ հետ վարվում է»: Ուրեմն նախ և առաջ նորան պէտք է լաւ օրինակ տալ, ուսուցիչը ինքը օրինակ պիտի լինի: իսկ եթէ ուղենանք շատ կանուխ պահանջել մանուկից մեծահոգութեան և անշահասիրութեան դրդիներ՝ առանց փոխադարձութեան, այդ կընշանակէ աւելի ակնկալել նոցա բարօյական ոյժերից: քան նոցա իսկական կարողութիւնն է:

Մենք տակաւին չենք յիշատակել և մի յուղումն, որ հաւասարապէս վտանգաւոր է իբրև աղբիւր տանջանաց և իբրև շարժառիթ գործելու, այսինքն ակը կամ սարսափը: Այս մասում միայն այն ժամանակ զուարճութիւն է առաջ գալիս, երբ որ մարդ աղատվում է ոյդ ճնշող զգացման վիճակից: Ահի գործածութիւնը այնքան միայն ներելի է, որքան որ առաւել մեծագոյն և զուր տանջանկներից փրկող հնար դառնայ: Եթէ պատմի սպահանալիքը և սաստը մեծ չէ, եթէ նա մի թեթև տաղտկութիւն կամ մի փոքր զրկանք է, սոքա օգուաւէտ խրատ կարող են լինել՝ առանց պրոդողութիւն կամ ահարեկութիւն պատճառելու: Ահը այնքան վտանգաւոր պատիժ է,

որ պէտք է գործ գրուի իրրեւ վերջին միջոց. նա մաշում է մարդու ոյժերը և թուլացնում է մտքի կապերը: Ամենից վատթարագոյն ձևն է նախապաշարման երկիւղը, մանուկներին ուրուականներով վեծերին ստանայի չարչարանքներով վախեցնելը: Մեծերից պատկառելն, ամօթխածութիւն զգալն նոյնպէս վախի մի տեսակ եւ բայց ամենալաւ տեսակը: Ուսուցումը պէտք է աշխատէ վերացնել անապաշտութիւնը, և ցոյց տալ վսեմութեան բարձրութիւնը:

Ամփոփենք մեր բոլոր ասածները: Խնչու համար այս բոլոր զգայումները շարեցինք: Մենք պէտք է համոզուէինք, թէ մանկան բնութիւնը քիչ ենք ճանաչում, ուստի և մի քանի շարժառիթներին միշտ տուել ենք չափազանց նշանակութիւն, միւները սովորաբար անփոյթ ենք թողել: Զենք հերքում այն իրողութիւնը, թէ դաստկան պարապմունքները յաջողեցնելու համար՝ արդարեւ շատ անգամ կարեւոր է դաւնում զազել մանկան ըմբոստութիւնը և յաղթել նորա կամակորութիւնը: Բայց մենք տեսանք, թէ միայն ծեծը բաւական չէ. այլ գործը արդիւնաւոր կերպով առաջ տանելու համար հարկաւոր են բազմաթիւ հնարներ՝ համապատասխան այն զգացմանց և յուղմանց ընդարձակութեան, որոնք ալէկոծում են մարդու սիրութ, ժամանակի քաղաքակրթութիւնը ցոյց է տալիս: Թէ ոչ միայն դպրոցում, այլ ամենայն տեղ, ուզք որ հեղինակութիւն կայ, վտանգաւոր է միայն սոսկ ահի ազդեցութիւնը, աւելի ևս վտանգաւոր է կոպիտ մարմնական ցաւ պատճառող և անձնագատութիւնը սոտրացնող պատիժների սպառնակիքը: Այժմ գիտենք և համոզուած ենք, թէ չարութեանց բաց դուռը այնպէս կարելի է փակել զանազան փրկարար հնարներով, որ հետզետէ ոչնչանայ արդէն սկսուած մոլութեան հակումը Բայց կարելի է բոլորովին ևս չըթաղնել, որ այդպիսի հակումները ոկսուին: Համապատաժևսան իննամատարութեամբ և կրթութեամբ հնարաւոր է նոյն իսկ հենց իսկդրան իսպառ ընկճել անկարգութիւններ և չարութիւններ անելու տրամադրութեան ծագումը, այնպէս որ նթէ մանուկը այդպէս է կրթուել տան մէջ այնուհետեւ նա շատ դժուարութեամբ պիտի դայթակղուի:

Պատիժների նկատմամբ բարերար գիւտ պէտք է համարենք այն մեծ սկզբունքը, թէ անկատկած պատիժը կամ անպատիժ մնայու անկարելութիւնը՝ աւելի է ազդում, քան պատժի խռովութիւնը։ Վերջապէս մենք այժմ հաւատում ենք, թէ որքան որ աւելի զարգանայ բարեացակամ հաղորդակցութիւնը, այնքան աւելի պակաս ասպարէզ կըմնայ անարդար վարուողութեանց համար։

Մենք պէտք է անիրագործելի նպատակներ չըդնենք մեր առաջ, մենք մոգական գաւազան չունինք, որ չար մանուկներին կարողանանք մի օրուայ մէջ հրեշտակներ գարձնել։ Մենք պէտք է մեզ լաւ հաշիւ տանք, թէ ով է մեր առաջ կեցած և ինչ արգելքներ ունինք մեր դիմաց։ Դպրոցի գլխաւոր գործն է ուսուցանել, որի համար ամենից առաջ հարկաւոր է ուշադրութիւն և ջանասիրութիւն զարթուցանել, որպէս զի մեր բաղձացած մտաւոր և այլ տպաւորութիւնները լաւ հաստատուին։ Մովի այդ մասը գրգռել, գրաւել, հրապուրել, շարժել և անգործ չըթողուշ—աշա ուսման առաջին խնդիրը։ Մենք դիտենք, թէ որոնք են այս գործին արգելող զանազան հանդամանքները, մենք պէտք է ջանանք դոցա յաղթել, որք են՝ հանկան անընդունակութեան, թիվիւական սղաւուացուն, աշխատասնիւեան դադարիւութեան, սովորական լաղիմ նաշաներ և կաղմակի գայցնակութեան, սոշաբրութեան դէրա ցըսւել, և վերլուցէս ճարդուն յարուի անհնազանդութեան հեղինակութեան դէմ։

Մանաւանդ չը մոռանանք, թէ այլ է մի աշակերտի գէմգործ դրուելի հնարք, և այլ է ամբողջ գաստառն զսպելու եղանակը։ Հեշտ է իւրաքանչիւր աշտկերտի անհատական յատկութիւնները ուսումնասիրել և ըստ այնմ վարուիլ նորա հետքայց ուրիշ բան է՝ ամբողջ գաստառն լուրջով փոխում է գործի էութիւնը, որ կարող է մեծ արգելքներ ստեղծել, բայց և խիստ նպաստաւոր լինել, ուստի և պէտք է քաջ կշռել յատուկ գործողութիւնը դորա համեմատ։ Մէկի հետ գործ ունենալը գիւրին է, բազմութեան հետ՝ գժուար, գասարանի մէջ ուսուցչի կառավարութիւնը բարդվում և ընդարձակվում է, նորա դիրքը

այդ տեղ աւելի վլուանգաւոր է, հետեւապէս նորա բազուկն էլ աւելի հաստատուն պիտի լինի։ Մի աշակերտի գէմ կարող ենք աւելի յատուկ անձնական շարժառակիթներ գործածել, բայց եթէ աշակերտների թիւը մեծ է, մենք շատ անգամ ախուր պարտաւորութիւն ենք ստանում պատժել օրինակի և խրա-սի համար։

Այս ամենի հետ մի՞թէ պէտք է տարակուսենք, թէ յաջողու-թեան համար որքան կարեռ են նաև նպաստաւոր պայմանները։ Ընդարձակ և օդանցուկ զինութիւնն, այնքան արձակ տեղ՝ որ յը խանգարուի շարժմանց ազատութիւնը և պատճառ չըդառ-նայ զանազան ընդհարումների և խափանման համար — ահա լաւ հրահանգութեան էական պայմանները։ Ապա հարկաւոր է պարտ ու պատշաճ կարգադրութիւնն, այսինքն բոլոր զանազան տեսակ շարժումների համեմատ կարգ ու կանոն, այնպէս որ իւրաքան-ցիւր աշակերտ իրան նշանակած տեղը պահպանէ և բոլոր բազ-մութիւնը ուսոււցի աչքի հանդէպ լինի։ Զբաղմանց կանոնա-ւոր ընդհատման և փոփոխութեանց մասին նմանապէս պէտք է հոգալ, որպէս զի աշակերտները չը յուզնեն և նոցա ոյժերն ու մուտոր գործողութիւնները չըթուլանան։

Բայց ի հարկէ ամենից աւելի կարեռ են ուսոււցանելու այն պիսի եղանակներ, որ նոքա կարողանան պայծառ կացուցանել ու պարզել բացատրութիւնները, դիւրացնել ու թեթևացնել ըմբռնելու համար հարկաւոր ջանքերը։

Ուսոււցչի անյնառութեան մասին այսքան կասենք, թէ ան-շուշան նա պէտք է հեղինակութիւն ունենայ, միայն հարկաւոր է, որ այդ հեղինակութիւնը աւելի համեստ և պարզ լինի, քան գոռող և ինքնահաւան։ Նորա ոյժը պէտք է լինի հանկալարժա-կան շնորհու այսինքն այն արթնութիւնը, որ ամենայն բան իս-կոյն նկատում է, այն արագութիւնը, որ տեղն ու տեղը գործ գնելու յարմար միջոց է հնարում։ Նա ոչ թէ պէտք է տեսնէ սկսուած անկարգութիւնը, այլ աշակերտների աչքերում կար-դայ և գուշակէ, թէնոքա ինչ են պատրաստում ձեռնարկել նա պէտք է նոյնպէս այդ աչքերից իմանայ, թէ ինչ հետեւանք կարող են ունենալ իւր իրատները, սպառնալիքները, պատիժ-

ները։ Մի ամսվրդովլութիւն, որ ոչ թէ թուլութիւնից է բըգիսում, այլ իւր անձը զսպելու կարողութիւնից, մի հանդարտութիւն, որ տեղն եկած ժամանակ եռանդով է վառլում և սաստող զօրութիւն է ստանում, — աշա կառավարութեան համար խիստ պատուական նպաւու և օժանդակութիւն։

Վերը յիշած շարժառիթների մէջ կային բազմաթիւ յօժարութիւններ և տհաճութիւններ, որոնցով որ ուզում ենք կարգ պահպանել գպրոցում։ բայց նոքա ամենքը պատիշ վն։ Խոկ եթէ պատիթների միջից էլ ճարպիկ կերպով գործ դրուին մեայն մրցութիւնը, գոլիեստն ու պարսաւը, ամաչեցուցանելը, արձակուրդ չըտալը, տուգանաց գասերը, — գրեթէ այնուհետեւ տեղիք չի լինի մարմնական պատիթներ գործ դնելու համար։ Ապա թէ ի կշիռ առնենք այն հանգամանքը, թէ գոցանից իւրաքանչիւրը որբան զանազան աստիճաններ և նրբութիւններ ունի, որոնցից ամեն մէկը աւելի ծանր և սաստիկ է՝ քան միւսը, մենք պիտի համոզուենք, որ գպրոցը բաւական հնար ունի անկարգութիւն պատճառողների կամակորութիւնը կոտրել մի մեծ շարք հետզիետէ առաւելող զրկանքներով և անախորժութիւններով, հնար ունի իւր նպատակին համելու առանց կոպիտ բռնաւորութեան։ Ճշմարիտ է և այն, թէ գպրոցում շատ են մտնում և այնպիսի աշակերտներ, որոնք խիստ անզգայ են բարոյական ազդմանց դէմ։ բայց և այնպէս մենք չենք կարող սոցա պատճառով անզգայ գարձնել ամբողջ գասատունը և ծեծը ստհմանել իրեւ ընդհանուր պատիժ։ Մարմնական պատիժը ամենքի համար ստորացուցիչ բան պէտք է լինի, և ա. մենքն էլ այդպէս պէտք է ըմբռնեն։ Դեռ միայն մարդասիրական և քաղաքակիրթ զգացմունքը այդպէս է թելադրում։ Եթէ տանը մանուկները սովորաբար ծեծ են կերել իրանց ծնողներից, այս հանգամանքը փաստաբանութիւն չէ, թէ նոքա ուրեմն մի և նոյն հրահանգութիւն պիտի ստանան գպրոցի մէջ ևս։ Ծնողները չեն հասկանում գասահարակութեան արուեստը, նոքա կարողութիւն չունին միւս տեսակ ազգեցութիւններ գործ դնելու։ Հետեւապէս գպրոցում հնարաւոր է աւելի լաւ վարուելու, քան ընտանեաց մէջ։

Մենք պէտք է մարդասիրական զգացման տեսակէտից աւելի բարձրանանք և այնպէս դիտենք ուսուցչի քրտնաջան աշխատութեանց արդիւնաւորութիւնը։ Մենք պնդում ենք, թէ նորու օգուտը իսկ պահանջում է, որ իւր ամբողջ գործունէութեան միջոցին՝ միշտ աշխատի առհասարակ աւելի զուարձութիւն պատճառող շարժառիթներին դիմելու, քան հակառակ շարժառիթներին։ Նա այսպէս պէտք է գործէ՝ մանաւանդ աշխարհաւորի համար զոգեբանութիւն մեծ և ստոյգ օրէնք է, թէ զուարձութիւնը առհասարակ աշխատացնում, զօրացնում, աճեցնում է մարդու բոլոր ոյժերը, իսկ տանջանքը՝ թուլացնում, թմրեցնում է։ Տարակոյս չըկայ, թէ ահով կարելի է մարդկանց վերայ դիւրաւ իշխել, գաւաղանի հարուածներով կարելի է մանուկ արարածին սաստել, բայց սորոկի ջանքերը լոկ միայն աշխատութիւն է, և ոչ թէ արդէնառաջ աշխատութիւն։ Տանջանքը զուր կերպով պարպիցնում և սպառում է ուղեղի ազնիւ զօրութիւնը, մինչդեռ աշակերտի ջանասիրութեան համար հարկաւոր է այդ զօրութեան ամենաբարձր պաշարը։ Պատիժը թէպէտ կատարում է իւր գործը, բայց վնասների մեծամեծ տոկոսով։ Փորձուի գիտենք, որ խստութեան ազդեցութեան տակ աշակերտի միաքը մոլոր վում է և դաս պատրաստելու նորա կարողութիւնը նսեմանում է։

Թեթեամիտ ծեքաբանները շատ անգամ փորձում են համոզել ուրիշներին, իբրև թէ հնարաւոր բան է մըս միայն հանոյական դրդիշների հրապուրով աշխատեցնել մանկական միտքը, իբրև թէ կարելի է այդպիսի ճարտար արուեստով գպրոցը դրախտ դարձնել՝ աշխատերտին բնաւ դառնութիւն ճաշակել չը տոլով։ մենք չենք հաւատում այս տղայաբանութեան։ Բայց աւելի իրաւամբ հաստատում ենք, որ եթէ քիչեական պայմանները անխնամ չը մնան, եթէ աշխատութիւնը աշակերտի հարացնութեանց և այժելի համեմատ լինի, եթէ բանական առաջնորդութիւնը չըզլանայ կարեւոր օգնութիւն և քաջալերութիւն տալու, այնուհետև թէպէտ այս կամ այն եղանակի դառնութիւնը դարձեալ երբեմն անխուսափելի կըլինի, բայց նա այն աստիճան

վտանգաւոր չի լինի, որ ընկճէ ոգւոյ աշխուժութիւնը և մաշէ ուղեղի եռանդը:

Վերջացնելով մեր խօսքը, մենք կարծում ենք, թէ մեր մէջ շատ կը գտնուին այնպիսի ուսուցիչներ, որոնք ջանալով իրանց պաշտօնը որբութեամբ կատարելու՝ անկեղծութեամբ երեաւ կայում են, իբր թէ բայց մշացնէր փորձել են և միշտ անօգուտ, ուստի անհրաժեշտ են համարում ծէծի գործադրութիւնը: Մեր ցանկութիւնն էր համոզել նոցա, թէ խնդիրը շատ աւելի բարդ է, քան ինչպէս որ նոքա փորձում են լուծել: Պատժի ինդիրը ամբողջ մանկավարժութեան և ուրեմն հսկելանա-նեան մեծ մասին է վերաբերում: Հասկանալի է, որ այսպէս ընդարձակ յարակցութիւնները՝ մեր յօդուածում կարող էինք պարզել լոկ միայն ակնարկներով: Արդ ով որ կը կամենայ աւելի մանրամատնութիւններ ուսումնասիրել, մենք կառաջարկենք նորան ամենալաւ նպաստ, որ և մեզ առաջնորդեց, այն է Բէնի հսկելանութեան ու մանկավարժութեան:

### Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ:

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Եպիսկոպուսիք):

Վանքի շուրջ տեղի ընտրութիւնը, ամեն մի հոգս, պահպանութիւն և պաշտպանութիւն լիովին ընկնումէ ուխտաւորների վերայ: Վանքը ոչինչ բանով նպաստաւոր չէ նորանց: Զկայ ոչ անձն, որ հոգատար լինէր ուխտաւորների վերայ, իջնելու տեղ ցոյց տար, վարձու վրան ճարեր, այս և այն անհրաժեշտ կարեաց հասու լինէր: Միով բանիւ ուխտաւորը լիովին օտարութեան մէջ է զգում իւրեան: Խւրաքանչիւր ուխտի օրի այցելուների թիւը հասնումէ մինչև վեց հաղաք հոգի:

Դարալագեազի թուրք և քիւրդ տարրը անհաղորդ չի մընում յիշեալ հանդիսին: Նոքա մեծամեծ խմբերով և առանձնակի խառնվում են հայ ուխտաւորների մէջ և գիշեր ու ցե-